քննութեան ժամանակ մեր առաջ դարձեալ երեւան կը գայ Շահաբբասի անձնաւորութիւնը:

Կան փաստեր, որոնք հաստատում են, թէ Շահաբբաս սկզբում այն դիտաւորութեամբ չեկաւ Հայաստան, որ գաղթեցընէ բնակիչներին, այլ միայն Օսմանցիներին երկրից դուրս քշելու նպատակով եկաւ: Հայերին Պարսկաստան գաղթեցընելու միտքը նրա մէջ ծագեց Հայաստան գալուց յետոյ. նա կամենում էր նախ իր երկիրն ազատել Օսմանցիներից, երկրորդ վաճառականութիւնն եւ արուեստները ծաղկեցընել. այժ չունենալով դիմադրել Օսմանցիներին, նա մտածեց աւերել երկիրը, որպէս զի նրանք այլ եւս ոչ մի հրապոյր չգտնելով՝ թողնեն հեռանան, իսկ վաճառականութիւնն եւ արուեստները ծաղկեցընելու համար, նա հինեց բազմաթիւ քարվանսարայներ, կայարաններ. եւ ապա նրա սրատես աչքը շատ շուտով նկատեց, որ վաճառականութեան ընդունակ տարրը Հայերն են եւ նրանք կարող են իր նպատակն իրագործել. այս պատճառով նա որոշեց Հայերին տեղափոխել Պարսկաստանի խորքը: Եթէ ենթադրենք, որ նա գաղթեցրեց Արարատեան Հայերին միայն այն նպատակով, որ Օսմանեան զօրքը պաշար եւ ուտելիք չգտնէ, ոչ եւս պատսպարան, այն ժամանակ հարկ չկար Ատրպատականի Հայերին եւս վարել Սպահան, Մազանդարան եւայլն, երբ այդ երկրից արդէն Օսմանցիները հեռացել էին: Մեր կարծիքով, Հայերի տեղափոխութեան